ՄԱՅՐ ԱԹՈՌ

Ամենապատիւ Տ. Տեղակալ Դէորգ արքեպիսկոպոս Սուրէնեան արժանացել է Բարձրագոյն շնորհի՝ ստանալով ս. Անանայի Ս. կարգի շքանշան։ Իսկ Երևանի փոխ Թեմակալ Տ. Յուսիկ արքեպիսկոպոս ստացել է ս. Ստանիսլաւի ա. կարգի շքանշան։

—Մեր ընթերցողներին յայտնի է, որ Փոխարքայի դիւանում Հայոց դպրոցների համար ծրագիր կազմող յանձնաժողովին մասնակցում էին Տ. Մեսրոպ վարդապետ (Յուսիկ արքեպիսկոպոսի հրաժարուելուց յետոյ) և պ. Օտ. Մամիկոնեան իբրև հանգուցեալ կաթուղիկոսի ներկայացուցիչներ։ Նոքա իրաւունք ունէին մասնակցելու խորհրդին կաթուղիկոսի տուած հրահանգների սահմանների մէջ։ Բայց նկատելով, որ յանձնաժողովը զբաղւում է այնպիսի խնդիրներով, որի համար իրենք լիազօրութիւն չունին, հրաժարուեցան այլ ևս յանձնաժողովի նիստերին մասնակցելուց, ընդունելով այս մասին Ն. Ամենապատուութիւն Տ. Տեղակալի հաւանութիւնը։

—Մատենադարանապետ Տ. Մեսրոպ վարդապետի հսկողութեամբ պատրաստուում են տեսնում նոր մատենադարան շինելու։ Շինութեան ծախսը խոստացել էր արդէն 1903 թուականին հոգալ պ. Աւան Իւզբաշեանը։

—Մայիսի 31–ին ճեմարանում վերջացան բոլոր պարապմունքները։ Այս տարի ճեմարանական ընթացաւարտներ չկային. ինչպէս յայտնի է անցեալ տարուանից փակուել են Բ. և Գ. լսարանները։ Դպրանոցական դասընթացքն աւարտեցին 28 հոգի, որոնց մեծ մասը խնդիր տուին լսարանական բաժինը մտնելու համար։

—Տ. Խորէն վարդապետ Լազարեանց նշանակուած է Դեղարգայ վանքի վանահայր. նոյն վանքի նախկին վա-

նահայրը Տ. Վահրամ վարդապետ Մոզնու Ս. Գէորգի վանահայր, Տ. Բառնաբաս վարդապետ նշանակուած է Հաղարծնի վանահայր։

Ամենապատիւ Տ. Տեղակալը մի գրութեամբ դիմել էր Պարսից Արեգակնափայլ Շահին և խնդրել Ատրպատականի նորընտիր առաջնորդ Տ. Կարապետ վարդապետին հաստատել իր պաշտօնում։ Որպէս պատասխան այդ գրութեան Տ. Տեղակալը ստացել Նորին արքայական Մեծութիւնից հետևեալ հրովարտակը.

Թարգմանութիւն.

Առ Տ. Տեղապահն իմաստնագոյն եպիսկոպոսապետի եւ Հայրապետի ամենայն Հայոց քրիստոնէական ուղղափառ եկեղեցւոյ.

Մերս արքայական սէր արտայայտող սերտ ըղձացող է Ձերում առողջութեան։

Պատուական գրութիւն Ձերդ Սրբազնութեան, որ յայտ առնէր զընտրութենէ և զնշանակմանէ Տ. Կարապետ Ծ. վարդապետի յառաջնորդութիւն Ատրպատականի Հայոց, արքայական հայեացք մեր ի նկատի առան։

Եւ քանզի արքայական սիրով տոգորեալ սիրտ մեր հանապազ միտեալ կայ դէպ յանդորրութիւն և հանդըստութիւն ամենայն հպատակաց և բնակչաց մերում պետութեան, ուստի պատուէր հրամանի տուաք ամենայն պաշտօնէից և գործակալաց մերոց համայն Ատրպատականի, զի աջակից և օժանդակ լիցին առ ի ճանաչել զնա յառաջնորդութիւն ամենայն Հայոց աշխարհին Ատրպատականի, զամենայն գործառնութիւնս հոգևորս յանձն արասցեն նմա և զամենայն արդար պահանջս ի կատար ածցեն փութանակի։

Իսկականի վրայ ստորագրուած.

Տուեալ ի 21-ն Ռաբիի՛լ ավալ ամսոյ 1326

Ի Թագաւորութեան մերում յերկրորդի ամի

Ի մայրաքաղաքն Թէհրան։

Նամակ խմբագրութեան.

Ա.

Յարգելի Խմբագրութիւն «Արարատ» ամսագրի.

Խնդրում եմ Յարգելի Խմբագրութեանդ «Արարատի» մերձակայ համարում զետեղէք հետեւեալը.

Նոր Ջուղայեցի բարեպաշտուհի տիկին Սանդուխտ Գ. Ղուկասեան նուէր է ուղարկել Մ. Տաճարին մի ասեղնագործ Գօրփուրայ, որը պատրաստել է յարգելի տիկինը իր ձեռքով ի յիշատակ իր հանգուցեալ ամուսին Գէորգ Ղուկասեանի։

Ուրախութեամբ ընդունելով այդ նուէրը և ծածկելով նրանով Աւագ սեղանը, օրհնում եմ յարգելի տիկնոջ իր դոյզն, սակայն ինքնաբուղխ նուէրի համար, որը առհաւատչեայ է նրա դէպի Մայր Աթոռս և Ս. Էջմիածինը ունեցած սիրոյն։

Լուսարարապետ Մայր Տաճարի Ս. Էջմիածնի՝

Ղեւոնդ Եպիսկոպոս.

Բ.

Յարգելի խմբագրութեան «Արարատ» ամսագրի.

Վանական Կառավարութիւնս խնդրում է յարգելի խմբագրութեանդ «Արարատի» մերձակայ համարում զետեղէք հետեւեալը.

Մօզդօկի քաղաքային վարչութիւնը անցեալ 1907 թ. 15-ն յունիսի № 1260 գրութեամբ ուղարկել էր Ս. Սինօդին 49 ռուբլի, Ս. Էջմիածնի տօնին աղքատներին բաժանելու համար։ Սինօդը տարւոյ փետրուարի 15-ին թ. 2124 հրամանի հետ ուղարկելով վերոյգրեալ գումարը, պատուիրեց Կառավարութեանս ի գործ դնել այդ գումարը ըստ ցանկութեան նուիրատուին, մասաղ *բաժանելով աղքատաց։ Վանական Կառավարութիւնս ճշտութեամբ կատարելով նուիրատուի ցանկութիւնը ամսոյս 15-ին Ս. Էջմիածնի տօնի օրը, այսու պատիւ ունի յայտարարելու ի գիտութիւն Մօզդօկի քաղաքային վարչութեան։*

Նախագահ Կառավարութեան

Ղեւոնդ Եպիսկոպոս

Քարտուղար

Լ. Ասլանեանց